

ԱՄ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՌԻ ՄԱՐԶԻ 2014-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵՎ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ/Հ	Գործադիր մարմնի անվանումը	Բարձրացված հարցերի հակիրճ բովանդակությունը	Ընթացքը
1.	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ջրային տնտեսության պետական կոմիտե	<p>Փոխել ՀՀ Լոռու մարզում «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից խմելու ջրի մատակարարման եվ ջրահեռացման ոլորտի բարելավման աշխատանքների համար 2014-2017 թվականներին կանխատեսվող ֆինանսավորման վերաբերյալ աղյուսակը՝ 8.3.2.</p> <p>Լոռու մարզի ոռոգման համակարգերի բարելավման առաջարկություններն ըստ տարածաշրջանների աղյուսակում առաջարկվել է կատարել լրացումներ:</p>	<p>Առաջարկությունը ընդունվել է: Կատարվել է փոփոխություն</p> <p>Առաջարկն ընդունվել է: Լրացումները կատարված են:</p>
2.	ՀՀ առողջապահության նախարարություն	<p>1. նախագծի հավելվածի «5.3.Առողջապահություն» բաժնի 187 կետում նշված է, որ 2006-2012թթ. աղիքային խմբի հիվանդությունների բռնկումներ չեն արձանագրվել, մինչդեռ 2008 թվականին Վանաձոր քաղաքում եղել է խոշոր բռնկում,</p> <p>2. հավելվածի նույն բաժնի «Հիմնախնդիրներ»-ում արտացոլված չեն վարակիչ հիվանդությունների կանխարգելման հիմնահարցերը, որոնք մարզում գերակա են, մասնավորապես մեծահասակների կանխարգելիչ պատվաստումների կազմակերպումը և իրականացումը, լաբորատոր համակարգի կատարելագործումը,</p> <p>3. հավելվածի նույն բաժնի 198 կետում առաջարկվում է «Առողջության ամրապնդման և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման» մարզային կենտրոնի ստեղծում, սակայն հասկանալի չէ, թե վերջինս ինչ գործառույթներ է իրականացնելու և արդյոք այն չի կրկնելու ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների համար արդեն իսկ սահմանված գործառույթները: Ելնելով այն հանգամանքից, որ նախատեսվող կառույցը պատրաստվում է իրականացնել հանրության բժշկասանիտարական կրթում և բժշկական կազմակերպությունների որակի բարելավում, հասկանալի չէ, թե որպես ինչ կազմակերպություն է այն լիցենզավորվելու:</p> <p>4. Նախագծի հավելվածի 8.3-րդ ենթաբաժնում արտացոլված չեն մարզի գյուղական բնակավայրերի ջրամատակարարման համակարգերում առկա հիմնախնդիրները, որ Տաշիրի, Թումանյանի, Գուգարքի տարածաշրջանների որոշ բնակավայրեր չունեն ջրամատակարարման ներքին ցանցեր:</p> <p>5. Կարևոր հիմնախնդիր է գյուղական ջրմուղների խմելու ջրի կանխարգելիչ վարակազերծման բացակայության (անբավարար վարակազերծման) հարցը: Խմելու ջուրը չի վարակազերծվում Ստեփանավանի տարածաշրջանի թվով 8, Տաշիրի տ/շրջանի թվով 16, Թումանյանի տարածաշրջանի թվով 14, Գուգարքի տարածաշրջանի թվով 12, Սպիտակի տարածաշրջանի թվով 17 համայնքներում:</p>	<p>Առաջարկությունը ընդունվել է: Կատարվել է փոփոխություն</p> <p>Առաջարկությունը ընդունվել է: Կատարվել է փոփոխություն</p> <p>Առաջարկությունը ընդունվել է: 198 կետն ամբողջությամբ հանվել է:</p> <p>Առաջարկությունը ընդունվել է: Կատարվել է փոփոխություն</p> <p>Առաջարկությունը ընդունվել է: Կատարվել է փոփոխություն</p>

<p>3.</p> <p>ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն</p>	<p>1. Նախագծի 1-ին և 5-րդ կետերում նշվում է, որ Լոռու մարզում համանման ծրագրեր իրականացվել են 2001-2005 և 2010-2013 թվականներին: Մեր կարծիքով՝ այդ ծրագրերի արդյունավետության վերաբերյալ առարկայական պատկերացում կազմելու համար, լավ կլիներ համապատասխան բաժնում ներկայացնել համառոտ տեղեկատվություն հիշյալ ծրագրերի նպատակների, կատարման ընթացքի, առաջացած խնդիրների, ծախսված միջոցների և վերջնական արդյունքի վերաբերյալ:</p>	<p>2010-2013թթ. ՄԶԾ-ն դեռևս ամփոփված չէ: Ծրագրերի կատարման ընթացքը և ծախսված միջոցները ներկայացված են համապատասխան բաժիններում:</p>
	<p>2. 54-րդ կետի աղյուսակ 3.2-ի գործազրկության մակարդակի ցուցանիշը տեղադրել ըստ ԱՎԾ-ի ՏՏ-ներում կատարված հետազոտության արդյունքների 2010թ. 19.7%, 2011թ.՝ 18.4% (աղբյուրը 2012թ. «Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում» վիճակագրական ժողովածու):</p>	<p>Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են</p>
	<p>3. 225-րդ կետի Աղյուսակ 5.4.1.-ում «Ծայրահեղ աղքատ» և «Աղքատ» սյունակներում նշված ցուցանիշներից չի հասկացվում թե դրանցով ինչ է բնութագրվում:</p>	<p>Աղյուսակը բերված է պաշտոնական սկզբնաղբյուրից (ՀՀ ԱՎԾ-ի «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը-2012», Ե., 2012թ., էջ 44)</p>
	<p>4. 290-րդ կետի Աղյուսակ 5.4.16.-ում լրացնել նաև 2012թ. տվյալները: համամեմատելիությունը ապահովելու համար անհրաժեշտ է բոլոր աղյուսակներում տվյալները լրացնել նույն ժամանակահատվածների համար:</p>	<p>2012թ. տվյալները պաշտոնապես դեռևս չի հրատարակված, առաջարկությունը չի ընդունվում:</p>
	<p>5. 291-րդ կետի «դրությամբ» բառից հետո ավելացնել «Զբաղվածության մարզային և տարածքային կենտրոններում հաշվառվել է.»</p> <ul style="list-style-type: none"> • Աշխատանք փնտրող 9533 մարդ , որից • աշխատանք փնտրող չզբաղված, 8739 մարդ, որից • գործազուրկի կարգավիճակ է ստացել 8561 մարդ <p>Գործազրկության մակարդակը կազմում է 8.1 % բառերը և (նշել աղբյուրը):</p>	<p>Կատարվել է տեքստային խմբագրում և աղբյուրի նշագրում:</p>
	<p>6. 294-րդ կետի՝ գործազրկության մակարդակը բնութագրող գծապատկերի հորիզոնական առանցքի վրա չի ներկայացված համապատասխան ցուցանիշները:</p>	<p>հորիզոնական առանցքը տարիների նշագրումն է, որն ի սկզբանե եղել է</p>
	<p>7. 296-րդ կետի աղյուսակ 5.4.18 տվյալներում առաջարկվել է կատարել փոփոխություններ</p>	<p>Կատարվել է Աղյուսակ 5.4.18-ի թվային տվյալների փոփոխություն</p>

4.	ՀՀ ֆինանսների նախարարություն	1. Ծրագրի 468-րդ կետով ներկայացված՝ ՀՀ պետական բյուջեի կողմից 2009-2012թթ. բնապահպանական և առողջապահական ծրագրեր իրականացնելու համար մարզին հատկացված գումարների վերաբերյալ տեղեկատվության մեջ Հազվի համայնքին 2011 թվականին հատկացված գումարը՝ «800» թիվը փոխարինել «8,000.0» թվով, իսկ N 6.2.1 Հավելվածում 2014 թվականին բնապահպանական և առողջապահական ծրագրեր իրականացնելու համար Ախթալա համայնքի գծով կանխատեսվող գումարը՝ 5,000.0» թիվը փոխարինել «4,500.0» թվով:	Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են
		2. 1). Ծրագրի 527-րդ կետում անհրաժեշտ է մարզային (տեղական) նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարության զուգանիշը (223.1 կմ) համապատասխանեցնել ՀՀ կառավարության 10.01.2008թ. N 112-Ն որոշմամբ ՀՀ Լոռու մարզի մարզային (տեղական) նշանակության ավտոճանապարհների գծով սահմանված զուգանիշին: 2) 531-րդ կետով և Աղյուսակ 8.2.3-ով 2014-2017թթ. մարզային նշանակության և ենթակառուցվածքային ավտոճանապարհների պահպանման ու շահագործման աշխատանքների համար նախատեսված զուգանիշը համապատասխանեցնել ՀՀ ՀՀ կառավարության 04.07.2013թ. N 740-Ն որոշմամբ հաստատված է համապատասխան չափաքանակին 3). Միաժամանակ մյուս միջոցառումների գծով ևս անհրաժեշտ է ՀՀ պետական բյուջեից հատկացվելիք գումարները (ինչպես տեքստային մասերում, այնպես էլ համապատասխան աղյուսակներում) համապատասխանեցնել ՀՀ 2014-2016 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով ՀՀ Լոռու մարզպետարանի համար նախատեսված չափաքանակներին: 4). Ծրագրի «8.2 Ծանապարհաշինություն» ենթաբաժնի 536-րդ կետում ամրագրված «ինժինեռական կառույցների պահպանման համար» ձևակերպումը անհրաժեշտ է համապատասխանեցնել այդ ենթաբաժնի Աղյուսակ 8.2.2-ով նախատեսված աշխատանքների բնույթին, իսկ նույն ենթաբաժնի Աղյուսակ 8.2.3-ի 4-րդ սյունակի «կապիտալ ներդրումներ» ձևակերպումը՝ համապատասխանեցնել նույն ենթաբաժնի Աղյուսակ 8.2.3-ի վերնագրին:	Առաջարկներն ընդունվել են: Փոփոխությունները կատարված են
		3. Ծրագրի «4. Մասնավոր հատվածի և ՓՄՁ զարգացում» գլխի էներգետիկա բաժնի 77-րդ կետի տեքստային մասում բերվող որոշ ցուցանիշների թվային արժեքները համապատասխանեցնել աղյուսակներ 4.1.1-ում, 4.2.1-ում և 12.1-ում բերված համապատասխան ցուցանիշների արժեքներին	Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են
		4. Միաժամանակ անհրաժեշտ է ներկայացնել նախատեսվող միջոցառումների ֆինանսական և ոչ ֆինանսական գնահատականները իրենց համապատասխան հաշվարկ-հիմնավորումներով, ինչպես նաև այդ միջոցառումների ֆինանսավորման աղբյուրները:	Հիմնավորումներն ու ֆինանսավորման աղբյուրները կհստակեցվեն ՏԱՊ-ում
		5. Ծրագրում առաջարկում ենք վերանայել մի շարք թվային տվյալներ՝ համապատասխանեցնելով ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության հրապարակումներին: Մասնավորապես՝ 70-րդ, 54-րդ, 201-րդ և 367 կետերում բերված թվային տվյալները:	Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են
		6. Նախագծի 1-ին կետում նշվում է. «հաստատել ՀՀ Լոռու մարզի 2014-2017 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն հավելվածի», ուստի անհրաժեշտ է Ծրագիրը ներկայացնել հավելվածի տեսքով (Նախագծի փոխարեն):	Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են

5.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	1. 129.-րդ կետի 1-ին նախադասությունը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ կրթության ոլորտում մասշտիբության առումով ամենախոցելիին նախադարձական կրթությունն է»:	Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են
		2. 129.-րդ կետի վերջին պարբերությունը վերախմբագրել (ներկայացվել է տարբերակը) և 154.-րդ՝ «Համակարգի թույլ կողմերը», կետի վերջին պարբերությունը՝ «1-ին դասարան գնացող երեխաների ընդամենը 20-25% հաճախելիությունը նախադարձական հաստատություններ:», անհրաժեշտ է հանել:	Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են
		3. 130.-րդ և 135.-րդ կետերում անհրաժեշտ է ներկայացնել խնդրի վերլուծության պատճառահետևանքային կապերը:	Առաջարկն ընդունվել է, կետերը խմբագրվել են
		4. 153.-րդ՝ «Համակարգի ուժեղ կողմերը», կետում լրացնել հետևյալ 4 դրույթները (ներկայացվել է դրույթների բովանդակությունը)	Առաջարկն ընդունվել է, դրույթները լրացվել են
		5. 154.-րդ՝ «Համակարգի թույլ կողմերը», կետի 1-ին՝ «Դպրոցների գործունեության թույլ վերահսկողությունը», ենթակետն անհրաժեշտ է հստակեցնել	Առաջարկն ընդունվել է, ենթակետն հստակեցվել է
		6. 154.-րդ կետի 2-րդ ենթակետը հանել, քանի որ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորումն իրականացվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի N1745-Ն որոշմամբ հաստատված կարգի, իսկ դպրոցների տնօրենների ատեստավորումը՝ հիմնավորման կարիք ունի:	Առաջարկն ընդունվել է: 2-րդ ենթակետը հանվել է
		7. 124-րդ կետի 1-ին նախադասությունը կրկնվում է 143.-րդ կետում, իսկ 136-րդ կետի 2-րդ նախադասությունը՝ 142.-րդ կետում:	Առաջարկն ընդունվել է,
		8. 156-րդ կետը վերախմբագրել (ներկայացվել է տարբերակը)	156 կետը վերախմբագրվել է
		9. Հաշվի առնելով, որ ՀՀ Լոռու մարզում գործող նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսուցանվում են մասնագիտություններ, որոնք համապատասխանում են մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանը և աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագիտություններ են, առաջարկվում է ծրագրում ավելացնել նոր դրույթ հետևյալ բովանդակությամբ. «Աջակցել ուսումնական հաստատություններին՝ ուսանողների արտադրական պրակտիկայի կազմակերպման, շրջանավարտներին աշխատանքի տեղավորման, գործատու և ուսումնական հաստատություն կապի զարգացման ու գործընթացը շարունակական դարձնելու հարցերում:»:	Առաջարկն ընդունվել է, առաջարկվող դրույթը ավելացվել է:
		10. Աղյուսակ 5.1.6.-ը՝ «ՀՀ Լոռու մարզում գործող նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական հաստատությունները» շարադրել նոր խմբագրությամբ՝ (ներկայացվել է տարբերակը)	Առաջարկն ընդունվել է, աղյուսակը խմբագրվել է
		11. Ծրագրի նախագծում «միջին-մասնագիտական» բառերը փոխարինել «միջին մասնագիտական» բառերով:	Առաջարկն ընդունվել է:
		12. Ծրագրի նախագծում հստակ սահմանված և դասակարգված չեն կրթության ոլորտի զարգացման արդյունքային ոչ ֆինանսական ցուցանիշները, որոնց հիման վրա պետք է իրականացվի Ծրագրի ընդհանուր մոնիթորինգը և գնահատումը: Միաժամանակ առաջարկում ենք ներկայացնել յուրաքանչյուր արդյունքային ցուցանիշի ազդեցության գնահատականը մարզի սոցիալ-տնտեսական զարգացման գործում:	Առաջարկն ընդունվել է, Ծրագրում ավելացվել է կրթության ոլորտի տրամաբանական հենքը

6.	<p style="text-align: center;">« Գյուղատնտեսության նախարարություն</p>	<p>Մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի հաշվեկշռի տեքստային մասը փոխել աղյուսակի տեսքով:</p>	<p>Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են:</p>
		<p>«Սերմնագուների տրամադրման շնորհիվ նախորդ տարվա համեմատ մարզում 3,378 հա-ով ավելացել է ընդհանուր ցանվող տարածքները» նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Մարզի հողօգտագործողներին աջակցելու նպատակով «Կառավարության կողմից տրամադրված աշնանացան ցորենի էլիտային և առաջին վերարտադրության, գարնանացան գարու, առվույտի, կորնզանի և եգիպտացորենի բարձորակ սերմացուների շնորհիվ 2013 թվականին նախորդ տարվա համեմատ ընդհանուր ցանվող տարածքները ավելացել են 3587 հա-ով:»</p>	<p>Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են:</p>
		<p>««Լոռու մարզի բուսաբուծության հիմնական արտադրական ցուցանիշները վերջին երեք տարվա կտրվածքով» վերնագրով աղյուսակում առաջարկվել է կատարել թվային մի քանի փոփոխություններ:</p>	<p>Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են:</p>
		<p>Նախագծի տեքստում առաջարկվել է փոխարինել ««Լ-ից դուրս կարտոֆիլի շուկայի բացակայությունը» նախադասությամբ:</p>	<p>Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են:</p>
		<p>Նախագծի տեքստում «ագարակատերեր» բառը առաջարկվել է փոխարինել «գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարողներ» բառով:</p>	<p>Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են:</p>
		<p>Նախագծի տեքստում «նոր տեխնոլոգիաների» բառերից հետո առաջարկվել է լրացնել «վերաբերյալ» բառը:</p>	<p>Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են:</p>
		<p>Գյուղատնտեսական տեխնիկայի ներկա վիճակի նկարագրությունը առաջարկվել է ներկայացնել աղյուսակի տեսքով, համապատասխանեցնելով այն «Կազմակերպության կողմից հրապարակված տվյալներին:</p>	<p>Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են:</p>
		<p>Նախագծի տեքստում առաջարկվել է «Ագրոհամալիրում ապահովագրության բացակայությունը» նախադասությունը փոխարինել «Գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի բացակայություն» նախադասությամբ:</p>	<p>Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են:</p>
		<p>Նախագծի տեքստում առաջարկվել է «Գյուղ. մթերքների վաճառքի շուկայում գների տարերային ցածր վիճակը» նախադասությունը փոխարինել «Գյուղատնտեսական արտադրանքի իրացման շուկաներում գների ցածր մակարդակը» նախադասությամբ:</p>	<p>Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են:</p>
		<p>Նախագծի տեքստում առաջարկվել է «տարածքում» բառը փոխարինել «տարածաշրջանում» բառով:</p>	<p>Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են:</p>
<p>Նախագծի տեքստում առաջարկվել է «Մարզում ստեղծել ագրոապահովագրական ծառայություն» նախադասությունը փոխարինել «Գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրում» նախադասությամբ:</p>	<p>Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են:</p>		

6.	<p style="text-align: center;">ՀՀ գյուղատնտեսության նախարարություն</p>	<p>Առաջարկվել է կատարել թվային փոփոխություններ ՀՀ Լոռու մարզում 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ ներկայացված տվյալներում:</p>	<p>Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են:</p>
		<p>Առաջարկվել է «Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի վերաբերյալ տվյալները ՀՀ Լոռու մարզում և Հայաստանի Հանրապետությունում 2010-2013թթ հունվարի 1-ի դրությամբ» աղյուսակում կատարել թվային փոփոխություններ:</p>	<p>Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են:</p>
		<p>Առաջարկվել է «Անասնապահական մթերքների արտադրության ծավալները ՀՀ Լոռու մարզում և Հայաստանի Հանրապետությունում 2010-2012թթ-ին» աղյուսակում կատարել թվային փոփոխություններ:</p>	<p>Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են:</p>
		<p>Նույն կետում մարզի և հանրապետության վերջին տարիների անասնագլխաքանակի միջին տվյալներին վերաբերող «12.0%» և «9.3%» ցուցանիշները փոխարինել համապատասխանաբար «12.3%» և «8.1%» ցուցանիշներով, իսկ մսի իրացման և կաթի արտադրության միջին տվյալներին վերաբերող «8.6%» և «7.9%» ցուցանիշները՝ համապատասխանաբար «11.7%» և «12.7%» ցուցանիշներով:</p>	<p>Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են:</p>
		<p>Մսակաթնային բառը փոխարինել կաթնամսային բառով:</p>	<p>Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են:</p>
		<p>«Անասունների ջրամատակարարում» բառերը փոխարինել «արոտների ջրարբիացում» բառերով</p>	<p>Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են:</p>
		<p>Ցանկալի է հստակեցնել կովերի արհեստական սերմնավորման գործընթացի կազմակերպման մեխանիզմները:</p>	<p>Առաջարկն ընդունվել է: Մեխանիզմները հստակեցվել են:</p>
		<p>«Անասնաբուժություն» բաժնում ներկայացնել վերջին տարիներին ոլորտում իրականացված աշխատանքների վիճակը բնութագրող տվյալները:</p>	<p>Առաջարկն ընդունվել է: Ներկայացվել են իրականացված աշխատանքների վերաբերյալ տվյալներ:</p>
		<p>«Գյուղատնտեսական վարկավորում» բաժինը նպատակահարմար է տեղադրել «Խորհրդատվություն և տեղեկատվություն» բաժնից առաջ:</p>	<p>Առաջարկն ընդունվել է: Տեղափոխությունը կատարված է:</p>
		<p>«Գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության մակարդակը բնորոշող ցուցանիշները» 6.1.1.4.-րդ աղյուսակում մսի ապրանքայնության «74.5» և «72.8%» ցուցանիշները փոխարինել համապատասխանաբար «72.3» և «83.7%» ցուցանիշներով: Աղյուսակից հանել «Պարենային բուստան» տողը</p>	<p>Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են:</p>
<p>«Մարզային ուսուցողախորհրդատվական ծառայության գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի (ԳԱՄԿ)» բառերը փոխարինել «Լոռու գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն» (ԳԱՄԿ) ՓԲԸ-ի» բառերով:</p>	<p>Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են:</p>		

7.	ՀՀ բնապահպանության նախարարություն	«Ստեփանավանի» բառը փոխարինել «Ստեփանավանի «Սոճուտ» բառերով:	Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են:
		«Վանաձորի» բառը փոխարինել «Վանաձորի «Սարուխանյան Ժ. անվան» բառերով	Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են:
		425-րդ կետն առաջարկվում է լրացնել հետևյալ կետերով. «խոշոր բնակավայրերում կենսաբանական մաքրման կայանների կառուցում, արտադրության հոսքաջրերի վնասազերծման համար կենսաբանական և ֆիզիկա-քիմիական մաքրման կայանների կառուցում, գետերի ափերի առավել վտանգված հատվածների ամրացում, ափամերձ պատնեշների կառուցում»	Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են:
		«Արգելավայրերում» բառն անհրաժեշտ է փոխարինել «Դենդրոպարկերում» բառով	Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են:
		«6.2.3 Բնապահպանության ոլորտի զարգացման ծրագրի տրամաբանական հենքը» աղյուսակի «Արդյունք 1 Անտառային ոլորտի բարելավում» սյունակի 3-րդ կետին համապատասխան «Արդյունքային ցուցանիշներ, թիրախներ» սյունակի՝ 3.2 կետն անհրաժեշտ է հանել, կամ հստակեցնել, որ միջոցառումը նախաձեռնվելու է տարածքային կառավարման համապատասխան մարմնի կողմից,	Առաջարկն ընդունվել է: 3,2, կետը հանված է
8.	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	ներկայացված նախագծում որոշ տվյալներ պետք է համապատասխանեցվեն Լոռու մարզի 2012թ հողային հաշվեկշռի հաստատված տվյալներին: Այսպես՝ ՀՀ Լոռու մարզի 2014-2017թթ սոցիալ- տնտեսական զարգացման ծրագրի նախագծի 12-րդ էջում նշված՝ մարզի տարածքը 3789 քառ.կմ-ի փոխարեն պետք է լինի 3798 քառ.կմ, գյուղատնտեսական նշանակության հողատարածքը՝ 250817 հա-ի փոխարեն պետք է լինի 251154 հա, այդ թվում վարելահողերը 41996 հա-ի փոխարեն՝ 42075 հա:	Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են
9.	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	1, Հակակարկտային կայանքներին վերաբերվող պարբերությունում առաջարկվել է ավելացնել հետևյալ նախադասությունը. «Մարզի գյուղատնտեսական ինտենսիվ մշակության տարածքները կարկտահարությունից պաշտպանելու համար տեղադրել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության տեխնոլոգիայով գործող ռադիոնոդեմային հեռակառավարմամբ զազագեներատորային թվով 110 և ռեզագենտային թվով 10 հակակարկտային կայան, որոնց կառավարումն իրականացնել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի Դսեղի ռադիոլոկացիոն կենտրոնից»:	Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են:
		2 .Նախագծի 10-րդ բաժինը վերանվանել՝ «10.ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿԱՐԿՏԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ»:	Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են:
		3. «10.1.3.» թվանիշերով համարակալել «ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԶՐՀԵՂԵՂՆԵՐԻ (ՍԵԼԱՎՆԵՐԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ» ենթագլուխը:	Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են:

9.	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	4. 10-րդ բաժնում լրացնել նոր գլուխ՝ «10.2. Տեխնաձին աղետներ» հետևյալ շարադրությամբ՝ (առաջարկվել է բովանդակության շարադրանքը)	Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են:
		5. 10.1-րդ գլխում լրացնել նոր ենթագլուխ՝ «10.1.4. Անտառային հրդեհներ» հետևյալ շարադրությամբ՝ (առաջարկվել է բովանդակության շարադրանքը)	Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են:
		6. 10-րդ բաժնում «10.3.» թվանիշերով համարակալել «ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ» գլուխը, իսկ «ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ» բառը փոխարինել «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ» բառով:	Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են:
		7. 10-րդ բաժնի «643.» կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ (առաջարկվել է բովանդակության շարադրանքը)	Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են:
		8. 10-րդ բաժնի «645.» կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ (առաջարկվել է բովանդակության շարադրանքը)	Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են:
		9. Նախագծի 10-րդ բաժնի «ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ» գլխում լրացնել նոր ենթակետ՝ (առաջարկվել է բովանդակության շարադրանքը)	Առաջարկն ընդունվել է: Փոփոխությունները կատարված են:
		10.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
10.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	ՀՀ Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի նախագծի վերաբերյալ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը առարկություններ և առաջարկություններ չունի:	
11.	ՀՀ Պետական եկամուտների կոմիտե	ՀՀ Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի նախագծի վերաբերյալ ՀՀ Պետական եկամուտների կոմիտեն առարկություններ և առաջարկություններ չունի:	
12.	ՀՄՆՀ	ՀՀ Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի նախագծի վերաբերյալ ՀՄՆՀ-ն առարկություններ և առաջարկություններ չունի:	
13.	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	ՀՀ Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի նախագծի վերաբերյալ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը առարկություններ և առաջարկություններ չունի:	